ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ
Samvelp77@mail.ru

Պետականութիւն չունեցող հայ ժողովրդի համար Ի. դարի սկիզբը լեցուն էր արհաւիրքներով, իսկ անհատ բարերարների ջանքերով անհնար էր դարմանել վէրքերը, ուստի բարեգործական լուրջ կազմակերպութիւնների ստեղծման անհրաժեշտութիւն էր առաջացել։ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ստեղծումը Թիֆլիսում (1881-1921), Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը Բաքուում, բաւական արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեցին Անդրկովկասում հայկական դպրոցների ցանցը ընդլայնելու առումով, աջակցեցին մշակութային ու աղքատախնամ ձեռնարկներին, սակայն դրանք չվերածուեցին համազգային կառոյցների, քանի որ Կովկասի ռուսական իշխանութիւնները չթոյլատրեցին գործունէութիւն ծաւալել Անդրկովկասից դուրս։ Այս շրջանում ստեղծուող բարեգործական կառոյցները, փաստօրէն, գործում էին ոեւէ պետութեան տարածքում եւ ի վիճակի չէին համահայկական խնդիրներ լուծել։

Մշակութային ու բարեգործական ուղղուածութեամբ ապակուսակցական, համազգային հզօր ընկերութիւն ստեղծելու գաղափարը հայ գործիչների շրջանում բաւական երկար ժամանակ լուրջ քննարկումների առարկայ էր։ Ցմոռանանք, որ այդ շրջանում հայ մշակութային ու յատկապէս կրթական կեանքի զարգացումը կապուած էր եկեղեցու, բարեգործական կառոյցների եւ բարերար անհատների աջակցութեան։

Հայ բուրժուազիայի ու մտաւորականութեան մի պատկառելի հատուածը քաղաքական ու յեղափոխական պայքարի միջոցով հայութեան վիճակը բարելաւելու գաղափարը անօգուտ, նոյնիսկ վնասակար էր համարում, քանի որ մտահոգուած էր, որ դա նոր գրգռութիւնների ու ջարդերի պատճառ կարող էր դառնալ։ Նման պայմաններում օտարութեան մէջ գործող, ազգի ճակատագրով մտահոգուած հայ գործիչներից շատերը եկել էին այն եզրակացութեան, որ հայրենի հողում բնակուող հայութեան վիճակը կարելի է բարելաւել միայն հայկական բարեսիրական միութիւն ստեղծելու միջոցով, որը չէր ունենալու քաղաքական ուղղուածութիւն, միաւորելու էր հայ ժողովրդի բոլոր խաւերին ու կուսակցութիւններին, աջակցելու էր հայութեան մտաւոր ու անտեսական վերելքին։

Այդ առթիւ Լեւոն Զորմիսեանը (1896-1980) գրում է, որ հայ բուրժուազիան դատապարտելի էր գտնում ոչ միայն յեղափոխական մեթոդը, այլ ընդհանրապէս քաղաքական գործունէութիւնը, եւ նրանց մէջ տարածուած էր այն մտայնութիւնը, թէ կարելի է արեւմտահայութեան վիճակը բարելաւել առանց հրապարակային, յստակ քաղաքական ծրագիր կազմելու եւ դրան հետեւելու, ապաքաղաքական գործունէութեամբ, «որ խորքին մէջ քաղաքականութեան կերպ մըն էր, բայց յստակ բանաձեւումով մը հռչակուած չէր»[1]։

Արեւմտեան Հայաստանում բնակուող գաւառահայութեան ծանր, դժոխային վիճակը բարելաւելու խնդիրը զբաղեցնում էր բոլորին։ Մեծ տէրութիւնների կողմից բարենորոգումների հարցի պարբերական արծարծումները այդպէս էլ չէին փոխում արեւմտահայերի վիճակը, այլ նոյնիսկ աւելի էին վատացնում եւ նոր ջարդերի պատճառ էին դառնում։ Նման պայմաններում ազգային գործիչները տարբեր միջոցներ էին փնտռում, որոնցից մէկը համազգային հզօր կառոյցի ստեղծումն էր, որ նիւթական օժանդակութիւն ցուցաբերէր կարիքաւոր հայ բնակչութեանը։

Համընդհանուր վստահութիւն վայելող, համազգային բարեգործական կազմակերպութիւն անհրաժեշտ էր նաեւ հայ մեծահարուստների թողած կտակները ճիշտ օգտագործելու համար։ Շատերն էին խոշոր գումարներ յատկացրել բարեգործական նպատակներով, սակայն դրանք կարճ ժամանակում փոշիանում էին եւ իրենց նպատակին լրիւ չէին ծառայում։ Հիմնական թերութիւնը այն էր, որ անձեռնմխելի դրամագլուխ չէր պահւում եւ գումարները ամբողջութեամբ ծախսւում էին, որից յետոյ այդ հիմնադրամով ստեղծուած դպրոցը կամ որբանոցը փակւում էր կամ նոր նուիրատուութեան կարիք էր առաջանում։ Դա, բնական է, չէր խրախուսում հարուստներին նոր գումարներ յատկացնելու՝ ազգային կարիքները հոգալու համար։

Հրապարակախօս Վահան Քիւրքճեանը (1878-1915) «Հայկական Միութիւնը» վերնագրով յօդուածում զարգացնում էր այն միտքը, որ տարիներ շարունակ խորհրդակցութեան, հրապարակագրութեան եւ գործնական փորձերի առարկայ հանդիսացող Հայկական Միութիւնը պէտք է դառնայ քաղաքական միութիւնից զրկուած հայ ժողովրդի գերագոյն մարմինը եւ «վրջօրէն ծրագրուած ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ եւ կանոնաւոր ՏԵՒԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ազգին բարոյական եւ տնտեսական շահերը պիտի պաշտպանէ»[2]։

Հայ գործիչները ոգեշնչուած էին յատկապէս Համաշխարհային Հրէական Դաշնութեան (Ալիանս Իզրայէլիթ Իւնիւերսալ) օրինակով։ Այն ստեղծուել էր Փարիզում, 1860ին եւ բաւական արդիւնաւէտ գործունէութիւն էր ծաւալել հրեաներին օգնելու գործում։ Այն նիւթական մեծ օժանդակութիւն ցոյց տուեց Ռուսաստանում կազմակերպուած հրէական ջարդերից տուժածներին։ Ինչպէս յայտնի է, 1905ին սկսուել էր ռուսական առաջին յեղափոխութիւնը։ Ցարական իշխանութիւնները տարբեր մեթոդներով փորձում էին Ռուսական Կայսրութեան ժողովուրդներին հեռու պահել յեղափոխութիւնից։ Այդ մեթոդներից էր տարբեր ժողովուրդների միջեւ ազգային ու կրօնական բախումներ հրահրելը։ Անդրկովկասում ազգամիջեան ընդհարումներ կազմակերպուեցին հայերի ու Կովկասի թաթարների (ներկայիս ադրբեջանցիների նախնիների) միջեւ։ Իսկ Ուկրաինայում կազմակերպուեցին հրէական ջարդեր։ Այդ ողբերգական իրադարձութիւնների հենց յաջորդ օրը եւրոպական թերթերը տեղեկացրին, որ Համաշխարհային Հրէական Միութիւնը 200.000 ֆրանկի օգնութիւն է ուղարկել տուժած հրեաներին[3]։ Հրէական Միութեան կողմից այդ կայծակնային օգնութեան փաստը հայ գործիչներին մտածել էր տալիս, որ անհրաժեշտ է ունենալ նմանատիպ կազմակերպութիւն, որը արագօրէն նիւթական աջակցութիւն ցոյց կը տար հայ աղէտեալներին։

Հայկական միութիւն ստեղծելու գաղափարը 1903ին գործնական հողի վրայ փորձեցին դնել փարիզահայ մի խումբ մտաւորականներ։ Նրանք ստեղծե-

ցին «Հայկական Միութիւն» անունով մի կազմակերպութիւն, որի նպատակն էր՝ «1. Զարգացնել համերաշխութիւնը հայոց մէջ, 2. Պաշտպանել օրինական միջոցներով հայ ժողովրդին բարոյական ու նիւթական շահերը, 3. Ամրապնդել հայ մտքին կապերը եւրոպական քաղաքակրթութեան հետ, եւ ճանչցնել Եւրո-պային՝ հայ ժողովրդին մտաւորական ու տնտեսական կեանքը, 4. Նպաստել հայ դպրոցներու զարգացման, աշխատիլ մասնաւորապէս համալսարանական քաղաքի մը մէջ հայկական քոլէժի մը հիմնարկութեան, 5. Քաջալերել ամէն հրատարակութիւն եւ գործ որ կը ձգտի այս արդիւնքները յառաջ բերել»[4]։ Սակայն այդ կառոյցը ինչ-ինչ պատճառներով այդպէս էլ չգործեց եւ ցրուեց։

Հայկական միութիւն ստեղծելու հարցը 1904-1905ին աշխուժօրէն սկսեց արծարծուել հայկական մամուլում (Անահիտ, Լուսաբեր, Շիրակ, Ազատ Բեմ, Բազմավէպ եւն.)։

1904ի վերջերից նման միութիւն ստեղծելու հարցը կրկին բարձրացրեց ճանաչուած հրապարակախօս, գրաքննադատ, գրող Արշակ Չօպանեանը (1872-1954) իր հրատարակած Անահիտ ամսագրում[5]։ Նա գտնում էր, որ չպէտք է փորձել վերակենդանացնել մէկուկէս տարի առաջ Փարիզում ստեղծուած, բայց չգործած «Հայկական Միութիւն»ը։ «Լաւագոյն է,- գրում է նա,- նորէն հիմնել այդպիսի մարմին մը, այնպիսի պայմաններու մէջ որ անոր կենսականութիւնը եւ տեւականութիւնը ապահովեն։ ...Պէտք է որ խումբ մը համասեռ (homogene) անձեր, իրար ճանչցող, սիրող, յարգող, եւ նիւթական կամ մտաւորական լուրջ զոհողութիւններ ընելու կարող ու տրամադիր, իրենց ազատ կամքով ու համաձայնութեամբ, կազմեն կորիզ մը, զայն հաստատեն առաջուց հաւաքուած դրամական կարեւոր գումարի մը վրայ, եւ յետոյ հրապարակ գան գործելու, եւ այդ ձեւով կազմուած ընկերութիւնը հետզհետէ ընդարձակելու համար։ Այսպէս կազմուած է Ալիանս Իսրայէլիթը, ինչպէս եւ նմանօրինակ ընկերութիւններէն շատերը։ Մինչեւ որ այս պայմանները չլրանան, «Հայկական Միութեան» խոշոր ծրագրով ընկերութիւն մը չի կրնար յաջողիլ, եւ կամ՝ եթէ հիմնուի այդպիսի ընկերութիւն մը, Փարիզի մէջ արդէն գոյութիւն ունեցող փոքրիկ ընկերութիւններուն պէս սահմանափակ բան մը կը մնայ»[6]։ Նա գտնում էր, որ միութեան կենտրոնը անպատճառ պէտք է լինի Փարիզը, ուր կար ազատ գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն, եւ հաւաքուած էին բազմաթիւ ականաւոր հայ գործիչներ։

Նրան արձագանգեցին բազմաթիւ հայ պարբերականներ, այդ թւում՝ Եգիպտահայ մամուլը՝ Լուսաբեր, Շիրակ, Ազատ Բեմ։ Բոլորն էլ պաշտպանեցին Չօպանեանի տեսակէտները եւ գտնում էին, որ նման կազմակերպութեան կենտրոնը պէտք է լինի Փարիզը։

Միայն Վենետիկի Մխիթարեանների Բազմավէպը զարգացրեց այն միտքը, որ հայկական միութիւն ստեղծելու ամենայարմար վայրը կարող է լինել Եգիպտոսը[7]։ Հեղինակը դա փաստարկում էր այնտեղի բազմամարդ ու մշտական հայ համայնքի առկայութեամբ, որ մօտ էր գտնուում հայրենիքին, կար ազատ գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն, իսկ հայերն այդ երկրի պետական, քաղաքական ու տնտեսական բնագաւառներում բաւական բարձր դիրք ունէին։ «Եգիպտոսը ամէնէն յարմար միջավայրն է, ուր կարելի ըլլայ հիմնել

գործ մը, որ մեր երկրէն դուրս՝ մեր ազգային կեանքին վրայ հզօրապէս պիտի ազդէ ամենաբարերար ներգործութեամբ»[8],- մատնանշում էր հեղինակը։

1904 Յունուարին Արփիար Արփիարեանը (1851-1908) Վահան Մալէզեանին ուղարկած նամակում կարծիք էր յայտնում, որ անհրաժեշտ է մի ինչ-որ ազգային ընկերութիւն ստեղծել, որը կը նպաստէր հայերի տնտեսական ու մտաւոր զարգացմանը, առանց քաղաքական ու յեղափոխական ձեռնարկների[9]։ Համահայկական միութիւն ստեղծելու նպատակով հաւաքներ կազմակերպեցին նաեւ Եգիպտոսի հայ մտաւորականները, նոյնիսկ ստեղծեցին յանձնախումբ՝ մշակելու ծրագիրն ու կանոնադրութիւնը, սակայն այդպէս էլ չկարողացան կազմակերպութիւնը կեանքի կոչել։ Քիւրքճեանի վկայութեամբ վերջին անգամ հայկական միութիւն ստեղծելու նպատակով 1905 Հոկտեմբերին է կահիրէում 14 մարդուց բաղկացած ժողով գումարուել։ Սակայն Պողոս Նուբարի կողմից Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն ստեղծելու լուրը վերջ է տուել այդ հաւաքներին[10]։

1905ի սկզբին համահայկական կառոյց ստեղծելու փորձ արեց կովկասահայ մեծահարուստ Ա. Մատուրեանը, որը Լոնդոնում հիմնեց «Հայկական Միութիւն» (Armenian Alliance)։ Սակայն այն նոյնպէս չկայացաւ եւ լուծարուեց 3 նիստից յետոյ։

Ինչպէս տեսնում ենք, համահայկական բարեգործական կառոյց ստեղծելու գաղափարը բաւական հասունացած էր հայութեան ծանր վիճակով մտահոգ գործիչների մօտ, անընդհատ արծարծւում էր մամուլում եւ նոյնիսկ մի շարք անյաջող փորձեր էին կատարուել նման կազմակերպութիւն ստեղծելու համար։ Այդ բոլոր ձախողումների պատճառը պէտք է համարել այն, որ համահայկական միութիւն ստեղծել փորձում էին հիմնականում մտաւորականութեան ներկայացուցիչները, որոնք չէին տիրապետում բաւարար նիւթական միջոցների, այդ գործիչներից շատերի մօտ բացակայում էր կազմակերպչական փորձը, նրանց մէջ չկային այնպիսի մեծ հեղինակութիւններ, որոնց հայ մեծահարուստները կը վստահէին խոշոր գումարներ։ Միւս կողմից, հայ դրամատէրերի հիմնական մասը ցանկութիւն չունէր իր ժամանակը վատնելու զուտ բարեգործական գործունէութեան վրայ։

Նման համազգային կազմակերպութեան ստեղծման գաղափարը գործնական հողի վրայ դնելու եւ իրականացնելու համար պարտական ենք եգիպտահայ նշանաւոր բարերար Պողոս Նուբար փաշային (1851-1930)։ Նա երիտասարդ տարիքից աչքի էր ընկել բարեգործութիւններով։ Եգիպտոսում կազմակերպուող հանգանակութիւնների ցուցակները գրեթէ միշտ գլխաւորում էր Նուբարի անունը։ Նա մեծ օժանդակութիւն ցուցաբերեց 1895-1896ի համիդեան կոտորածներից մազապուրծ եւ Եգիպտոս ապաստանած հազարաւոր փախստականներին[11], 1904ի Սասունի ջարդերից, 1905-1906ի հայ-թաթարական ընդհարումներից տուժածներին[12], մշտապէս աջակցում էր Էջմիածնի Կաթողիկոսարանին ու Կ. Պոլսի Պատրիարքարանին[13]։ Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, Նուբարն աջակից էր ոչ միայն եգիպտահայ համայնքին, այլ նաեւ արեւմտահայութեանն ու Կովկասի հայութեանը պատուհասող անհամար եւ իրար յաջորդող աղէտների դարմանման գործին։ Ժամանակի ընթացքում նա համոզուեց, որ մասնակի հանգանակութիւններ կատարելով կամ անհատական օգնութեամբ անհնար է վերացնել Ի. դարի սկզբի հայ ժողովրդի անհուն թշուառութիւնը։

Նուբարը եւս գիտակցում էր համազգային բարեգործական կազմակերպութեան անհրաժեշտութիւնը, քանի որ տեսնում էր, թէ ինչպէս են աղէտները իրար ետեւից պատուհասում հայ ժողովրդին, իսկ օգնութիւնը միշտ ուշ էր տեղ հասնում, քանի որ հանգանակութիւնները դանդաղ էին ընթանում։ Հանգանակուած գումարների մի մասն էլ փոշիանում էր մինչեւ տեղ հասնելը, եւ դա աւելի էր վատացնում աղէտեալների վիճակը։ Դրամահաւաք էին կազմակերպում նաեւ յեղափոխական կուսակցութիւնները, որոնց հաւաքած գումարների մեծ մասը կորչում էր անյայտ ուղղութիւններով։ Վերակազմեալ հնչակեանները նոյնպէս քանիցս նրան դիմել էին դրամ ստանալու պահանջով, բայց Նուբարը, չնայած եղած սպառնալիքներին, մերժողական պատասխան էր տուել, քանի որ վնասակար էր համարում յեղափոխական ամէն տեսակի գործունէութիւնը։ «Այս քառասային վիճակին մէջը կ՚ապրէինք,- գրում է ՀԲԸՄ հիմնադիրներից Երուանդ Աղաթօնը (1860-1934), - երբ օր մը, ողբացեալ Պօղոս փաշան, յուսահատ եւ դառնացած, ըսաւ.- Մենք այս չարիքին առաջքը չպիտի կրնանք առնել, գէթ ջանանք անոր ցաւալի հետեւանքները դարմանել։ Եւ այդ վայրկեանէն միտքը դրաւ «Ալիանս Իզրայէլիթ»ի նման ընկերութիւն մը կազմել՝ որու մասին տարիներ առաջ խօսուած էր արդէն»[14]։

Ըստ Աղաթօնի դեռեւս 1901-1902ին ինքը, Նուբարը եւ Ապահ Պետրոսեանը[15] խօսել են նման կազմակերպութիւն ստեղծելու անհրաժեշտութեան մասին։ Աղաթօնը նոյնիսկ այդ կառոյցի համար ծրագիր էր կազմել[16]։ Սակայն բարեգործական կառոյց ստեղծելու գործին Նուբարը աւելի լրջօրէն լծուեց երբ 1904ի Սասունի կոտորածներից եւ 1905ին սկսուած հայ-թաթարական ընդհարումներից յետոյ ականատես եղաւ, թէ օգնութեան գումարները ինչքան դանդաղ են հանգանակւում եւ տեղ հասնում։ Միաժամանակ նա տեսնում էր թէ ինչ արագութեամբ է Հրէական Միութիւնը օգնութեան հասնում իր հայրենակիցներին։

Մինչ համահայկական կազմակերպութիւն ստեղծելը Նուբարը մանրամասն ծանօթացաւ Հրէական Միութեան կանոնադրութեանը եւ գործունէութեանը։ Աղաթօնը բարերարին ներկայացրեց տարիներ առաջ իր կազմած «Հայկական Միութեան Ծրագիր»ը, որը խմբագրել էր Լեւոն Մկրտիչեանը։ Սակայն Նուբարը բոլորովին այլ ծրագիր պատրաստեց եւ ստեղծեց խմբագրական խորհուրդ, որտեղ ընդգրկեց Եպիսկոպոս Արթին փաշային (1842-1919), Կարապետ բէյ Շերիտճեանին (1851-1926), Մկրտիչ Անդրանիկեանին (1851-1939), Աղաթօնին եւ Նազարէթ Տաղաւարեանին (1862-1915)[17]։

Այսպիսով, հաշուի առնելով հայութեան դիմագրաւած դժուարութիւնները՝ ազգային բարերարը մտայղացաւ Համաշխարհային Հրէական Միութիւն կազմակերպութեան օրինակով ստեղծել համահայկական բարեգործական մի ընկերութիւն, որը ժամանակին օգնութեան կը հասնէր աղէտների դէպքում, կը նպաստէր հայութեան նիւթական ու տնտեսական վիճակի բարելաւմանը, կրթական առաջընթացին։

Այդ նպատակով 1905ի վերջերին նա կահիրէում ստեղծեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որի նպատակն էր. ա.՝ օժանդակել հայ ժողովրդի եւ իր հայրենիքի մտաւոր եւ բարոյական զարգացմանը, բ.՝ օգնել նրանց նիւթական եւ տնտեսական վիճակի բարելաւմանը, գ.՝ քաջալերել այդ

արդիւնքները առաջ բերելուն ծառայող ամէն ձեռնարկ ու հրատարակութիւն[18]։

Կահիրէում Նուբարի կողմից ՀԲԸՄ ստեղծելու լուրը առաջինը եկեղեցու բեմից ժողովրդին աւետեց Եգիպտոսի թեմի առաջնորդ (1905-1912) Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունին (1863-1941)՝ 1905 Դեկտեմբերի 10ին։ Նա յայտնեց, որ հիմնադիր-նախագահն արդէն Միութեան դրամարկղ է մուծել 1000 ոսկի, որից 200 ոսկին անմիջապէս պէտք է յանձնուէր «Կովկասի Արկածելոց Նպաստ Հանգանակող Յանձնախումբ»ին, ինչպէս նաեւ յանձն է առել ամսական 20 ոսկի մուծել կազմակերպութեանը[19]։

ՀԲԸՄ հիմնադրութեան լուրը մեծ խանդավառութեամբ ընդունուեց հայ հասարակութեան կողմից։

ՀԲԸՄին ընծայուած լայն ընդունելութիւնը Հուսաբերի յօդուածագիրը բա-ցատրում է ազգային լուրջ կազմակերպութեան ստեղծման գաղափարի բաւա-կան հասունացած եւ իրականացման ժամանակը հասած լինելով[20]։

Չնայած, որ սկզբում դեռեւս չէր հրապարակուել ծրագիրը, կանոնագիրը եւ միւս հիմնադիրների անունները, «...բայց Պօղոս փաշա Նուպարին նախագահութիւնը երաշխաւորութիւն մըն է թէ լուրջ ձեռնարկի մը հանդէպ կը գտնուինք»՝ այդ օրերին գրում է Արփիարեանը[21]։

Նուբարը մեծ հեղինակութիւն էր վայելում ոչ միայն իր բարեգործութիւնների ու բարձր դիրքի, այլեւ իր գործնականութեան շնորհիւ։ Արփիարեանը մի քանի ամիս անց գրում, որ Նուբարը իր մեծ իմացականութեամբ, ընկերական բարձր դիրքով, բիւրեղային պատուասիրութեամբ, ազգին մատուցած ծառայութիւններով անզուգական անձնաւորութիւն էր, որի կողմը սուրբց ամէն հայի մտածմունքն ու յոյսերը[22]։ Հրապարակախօս Լեւոն Մկրտիչեանը եւս վկայում է, որ այդ հաստատութեան սկզբնական յաջողութեան առաջին պատճառը հիմնադրի հանդէպ եղած բացարձակ վստահութիւնն էր[23]։

Նոր կազմակերպութեան ստեղծմանը ուրախութեամբ արձագանգեց նաեւ Զօպանեանը, չնայած դեռեւս հրապարակուած չէին ՀԲԸՄ կանոնադրութիւնն ու նպատակները։ «Հաճոյքով իմացայ Եգիպտոսի հայ թերթերէն թէ Գահիրէի մէջ խումբ մը Հայեր որոշեր են հիմնել «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» մը «Ալիանս Իսրայէլիթ»ի ծրագրով, եւ թէ Պօղոս փաշա Նուպար յանձն առեր է պատուոյ նախագահութիւնը եւ իր որդին՝ Առաքել պէյ գանձապահի պաշտօնը։- Գրում է Զօպանեանը եւ աւելացնում,- Կը մաղթեմ որ այդ ընկերութիւնը ըլլայ այն որուն պէտքը կը զգացուէր վաղուց եւ որու մասին «Անահիտ»ի մէջ գրած եմ յաճախ։ Այստեղ ես այն կարծիքը յայտնած էի թէ այդպիսի ընկերութեան մը վարիչ մարմինը պէտք է Փարիզի պէս կեդրոնական քաղաքի մը մէջ հաստատուի. իմ կարծիքս միշտ կը մնայ անփոփոխ. բայց Պօղոս փաշայի պէս անձնաւորութեան մը գործին գլուխն անցնիլը հասկնալի կը դարձնէ որ առ այժմ ընկերութեան հիմունքը հաստատուի Գահիրէի մէջ»[24]։

Այսպիսով, Նուբարի հեղինակութեան շնորհիւ ՀԲԸՄը մեծ ոգեւորութեամբ ընդունուեց ոչ միայն եգիպտահայութեան, այլ նաեւ ընդհանրապէս հայութեան կողմից։

Ինչպէս տեսանք, ՀԲԸՄը հիմնուեց դեռեւս 1905ի Դեկտեմբերին, սակայն նրա պաշտօնական ստեղծումը՝ հիմնադիր ժողովը, տեղի ունեցաւ 1906 Ապրիլի

15ին եւ հաստատեց Միութեան կանոնադրութիւնը։ Առաջին ատենագրութիւնը վկայում է. «Այսօր, 15 Ապրիլ, 1906, Ս. Զատկի առաջին օրը, ստորագրեալքս, ի Գահիրէ, Նորին Վսեմ. Պօղոս Բաշայի ապարանքը, կազմեցինք ընկերութիւն մը «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ...։ Ընկերութեան Վարչական առաջին ժողովը բաղկացած է Կանոնագրիս 10րդ Յօդուածին մէջ նշանակուած 10 անդամներէն եւ այսօրուընէ Ընկերութիւնս կազմակերպեալ հոչակուած է»[25]։

Այդ ժողովին մասնակցեցին եւ հիմնադիր փաստաթղթի տակ իրենց ստորագրութիւնները դրեցին հետեւեալ անձինք.- Պօղոս Նուբար փաշա (ատենապետ), Եագուպ Արթին փաշա (փոխատենապետ), Երուանդ բէյ Աղաթօն (փոխատենապետ), Առաքել բէյ Նուբար (1881-1954) (գանձապահ), Տքթ. Նազարէթ Տաղաւարեան, Մկրտիչ Անդրանիկեան (1851-1939), Գրիգոր Եղիայեան (1833-1911), Կարապետ բէյ Շերիտճեան, Մկրտիչ բէյ Մարկոսոֆ (1849-1919), Յովհաննէս բէյ Յակոբեան (1855-1917)։

Կանոնագիրն ունէր երկու անփոփոխելի պայմաններ՝ 1.- Ընկերութիւնը մարդասիրական հաստատութիւն է, որեւէ քաղաքական կամ առեւտրական հանգամանք չունի, 2.- Ընկերութեան հիմնական դրամագլուխը անձեռնմխելի է։

Առաջին դրոյթի միջոցով կառոյցը հեռու էր մնալու քաղաքական հոսանքներից, քանի որ հակառակ պարագայում չէր կարող լինել համահայկական կազմակերպութիւն։ Նուբարը խնդիր էր դրել ստեղծել Բարեգործականը բոլոր հայերի համար՝ առանց դաւանական ու քաղաքական բաժանումների։

Անձեռնմխելի դրամագլխի մասին դրոյթը, որը սովորական երեւոյթ էր Եւրոպայում, հայ իրականութեան մէջ առաջին անգամ կիրառուել է ՀԲԸՄի կողմից։ Նախկինում ստեղծուած հայկական բարեգործական կառոյցները անձեռնմխելի դրամագլուխ չէին պահում, որի հետեւանքով հիմնական դրամագլխի ծախսուելուց յետոյ և՛ իրենք և՛ իրենց ստեղծած հաստատութիւնները դադարում էին։ Եթէ անձեռնմխելի դրամագլխի մասին դրոյթը չլինէր, բնականաբար հայութեանը պատուհասող աղէտները դարմանելու համար ՀԲԸՄի գումարները չէին բաւարարի եւ կը սպառուէին գործունէութեան առաջին իսկ տարիներից, իսկ կառոյցը կը դադարեցնէր իր գործունէութիւնը։ Նուբարի կիրառած այդ նորութիւնը պատճառ դարձաւ, որ նրա ստեղծած միութիւնը եւ միւս բարեգործական հաստատութիւնները (դպրոցներ, հիմնադրամներ եւն.) յաջողութեամբ գործեն մինչեւ այսօր։

Այդ երկու դրոյթների շնորհիւ Նուբարը կարողացաւ կազմակերպութիւնը պահել բարեգործական ուղու վրայ՝ հեռու քաղաքական վերիվայրումներից եւ ապահովեց նրա յարատեւութիւնն ու յետագայ բարգաւաճումը՝ անձեռնմխելի դրամագլխի շնորհիւ։

ՀԲԸՄի կանոնագիրը հաստատելու համար դեռեւս Ապրիլի 12ին Նուբարը եւ Արթին փաշան պաշտօնապէս դիմել էին Եգիպտոսի իշխանութիւններին։ Ներքին Գործերի նախարար Մուստաֆա Ֆեհմի փաշան Մայիսի 7ին պաշտօնական պատասխան ուղարկեց, որտեղ նշուած էր. «Կը շնորհաւորեմ զՁեզ որ Հայոց նիւթական եւ բարոյական վիճակի բարելաւման հոգածու կը գտնուիք, եւ Կառավարութիւնն ընդունելով այդ գործին օգտակարութիւնը՝ յաջողութիւն կը մաղթէ անոր»[26]։

Այսպիսով, 1906 Ապրիլի 15ին, պաշտօնապէս հիմնուեց ՀԲԸՄը, որի հիմնադիրները հանդիսացան եգիպտահայ մի խումբ մեծահարուստներ։ «Շատ գաղափար չունէինք այդ կարգի ուժերէ կազմուած մարմնոյ մը յարատեւութեան եւ օգտակարութեան վրայ,- *գրում է Միքայէլ Նաթանեանը* (1868-1954),- բայց շատ չանցած մեր այդ կարծիքը փոխուեցաւ...: Գործին գլուխը կը գտնուէին արդարեւ, այնպիսի հոյակապ դէմքեր եւ անձնաւորութիւններ, եւ անոնք ա՜յնքան սրտովին նուիրուած եւ փարած էին Հ.Բ.Ընդ. Միութեան, որ անիկա Հայ կեանքի մէջ նոր դարաշրջանի մը սկիզբը եղաւ»[27]։

ՀԲԸՄի հիմնադրումից երեք տարի անց, անդրադառնալով Միութեան ստեղծման պատճառներին, վարչութեան տեղեկագիրը նշում է, որ հիմնադիրները «ուզեցին մանաւանդ լրացնել պակաս մը՝ ազգային բազմաշատ եւ ստիպողական պէտքերը ուսումնասիրելու, ինչպէս նաեւ անոնց հարկադրած դարմանները հոգալու։ Մեր շատ մը ազգային ընկերակցութիւնները, որոնք տեղական խնդիրներու կամ մասնաւոր նպատակի մը համար կազմուած են, իրենց անձուկ միջոցներով եւ սահմանափակ գործունէութեամբ չէին կրնար բնականաբար ընդգրկել ազգային յեղաշրջումի ընդարձակ գործը։ Այս պատճառաւ վաղուց ըմբռնուած էր ազգային ընդհանուր Միութեան մը կարեւորութիւնը։ Այս մտածումը ունենալով երեք տարի առաջ յուցանք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գաղափարը՝ անջատ դաւանական կամ դասակարգային խնդիրներէ, եւ իր գոյութեանը մէջ անկախ ազգային իշխանութիւններէն կամ ուրէ կուսակցական ազդեցութիւններէն»[28]։

Նուբարը իրեն յատուկ եռանդով ձեռնամուխ եղաւ Բարեգործականի ծաւալման ու զարգացման գործին, եւ առաջին արդիւնքներն երեւան եկան շատ կարճ ժամանակում։ ՀԲԸՄը գերազանցեց բոլոր սպասումները, քանի որ դարձաւ Սփիւռքի ամենահզօր հասարակական կազմակերպութիւնը, որի մասնաճիւղերը տարածուեցին հայկական բոլոր համայնքներում եւ յետագայում մեծ դեր խաղացին սփիւռքահայութեան կրթական, մշակութային ու մարզական առաջընթացի գործում։ ՀԲԸՄը նաեւ մեծ աջակցութիւն ցուցաբերեց Խորհրդային Հայաստանին՝ վերաշինութեան եւ ներգաղթի կազմակերպման գործում[29]։

Այսպիսով, ՀԲԸՄի ստեղծումը կատարուեց ժամանակին, եւ այն ունեցաւ խոշոր ներդրում հայ ժողովրդի կրթական, մշակութային, մարզական եւ ինչու չէ՝ նաեւ տնտեսական կեանքում։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Լեւոն Զորմիսեան, Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան, Հտոր. Գ. (1908-1922), Պէյրութ, Տպ. Սեւան*, 1975, *էջ* 115։

[2] *Վահան Քիւրքճեան,* «*Հայկական Միութիւնը*», *Լուսաբեր, Գահիրէ*, 30 *Մարտ* 1905։

[3] *Էդուարդ Մելքոնեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատմութիւն, Երեւան,* «*Մուղնի*» *Հրատ.*, 2005, *էջ* 34։

[4] *Արշակ Զօպանեան,* «*Մարդ Մը*», *Անահիտ, թիւ* 11, 1904, *էջ* 162-163։

[5] *Նոյն, էջ* 161-163. *Նաեւ՝ Արշակ Զօպանեան,* «*Բառ Մը Պ. Ջերազին*», *Անահիտ, թիւ* 2, 1905, *էջ* 44-45։

[6] *Զօպանեան,* «*Բառ Մը*», *էջ* 45։

[7] «*Գաղափար Մը եւ Բարեփոխումները*», *Բազմավէպ, Հտոր. ԿԳ., թիւ* 3, *Մարտ*, 1905, *էջ* 105-110։

[8] Նոյն, էջ 107։

[9] Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1931, Փարիզ, 1935, էջ 451։

[10] Մելքոնեան, էջ 33։

[11] Երուանդ Օտեան, Պօղոս Փաշա Նուպար, Հրատարակութիւն Եփրատ Գործակալութեան, Կ. Պոլիս, Տպ. Արաքս, 1913, էջ 12։

[12] Լուսաբեր, 23 Դեկտեմբեր 1905։

[13] Արտաշէս Գարտաշեան, Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, Հատ. Բ., Վենետիկ-Ս. Ղազար, 1986, էջ 280։

[14] Երուանդ Աղաթօն, Ինչ կը Խորհին Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Հիմնադիրները, Փարիզ, 1933, էջ 26։

[15] Բուն անունով Աւետիս Գրմգըմեան։ Մնած է Արաբկիր 1872ին։ 1895ին իբրեւ հնչակեան Կիլիկիա անցնելով Աղասիի հետ կը կազմակերպէ Զէյթունի ապստամբութիւնը։ Աւելի ետք կ'անցնի Եւրոպա եւ Պօղոս Նուպարի յանձնարարութեամբ կը հաստատուի Գահիրէ։ Կը դառնայ հիմնադիրներէն Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան։ 1921ին կ'անցնի Կիլիկիա՝ պայքարելու անոր ինքնապաշտպանութեան համար։ Կը մահանայ Գահիրէ 1928ին։ 1918ին հրատարակած է Արծիւներու Բոյնը հատորը, նուիրուած Զէյթունի 1895ի դէպքերուն։

[16] Մելքոնեան, էջ 34։

[17] Մելքոնեան, էջ 34-35։

[18] Ոսկեմատեան, էջ 25։

[19] «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն», Լուսաբեր, 12 Դեկտեմբեր 1905։

[20] Կիլիկեցի, «Հայկական Բ. Ը. Միութիւնը», Լուսաբեր, 21 Դեկտեմբեր 1905։

[21] Արփիար Արփիարեան, «Կարկաւուած Ձեռք», Լուսաբեր, 14 Դեկտեմբեր 1905։

[22] Հայկակ, «Գործ Մը՝ Կոթող Մը», Լուսաբեր, 7 Յուլիս 1906։

[23] Լեւոն Մկրտիչեան, «Բարեգործականին Յաջողութեան Գաղտնիքները», Միութիւն, Յունուար-Յունիս, 1926, էջ 41։

[24] Արշակ Զօպանեան, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն», Անահիտ, թիւ 1-2, 1906, էջ 27։

[25] Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1913, Գահիրէ, 1914, էջ 29։

[26] Կանոնագիր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Աղեքսանդրիա, 1906, էջ 3։

[27] Միքայէլ Նաթանեան, «Ռամկավար Կուսակցութեան Կազմութեան Պարագաները», Եգիպտահայ Տարեցոյց 1925, Ա. Տարի, Աղեքսանդրիա, Տպ. Ա. Գասապեան, 1924, էջ 163։

[28] Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն. Եռամեայ Տեղեկագիր, Գահիրէ, 1909, էջ 7-8։

[29] Այդ մասին տե՛ս նաեւ՝ այս հատորին մէջ տեղ գտած Վալէ Ղազարեանի հրապարակումը։

THE CIRCUMSTANCES THAT LED TO THE FOUNDING OF THE ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

(Summary)

SAMUEL POGHOSSIAN
samvelp77@mail.ru

Founding a strong pan-national organization with a cultural, philanthropic, and non-partisan orientation was a topic of serious and extensive discussion among Armenian activists in the early twentieth century.

This idea was implemented by Boghos Nubar Pasha of Egypt. Nubar was convinced that piecemeal fundraising and individual help was not enough to alleviate the dire conditions of the Armenians due to continual massacres and killings in the Ottoman Empire at the beginning of the 20th Century.

Against the backdrop of various attempts at establishing a pan-Armenian philanthropic, a-political, and non-partisan organization, the author highlights certain factors that turned Nubar's brainchild into a success, unlike its various predecessors, which were limited, constrained within the boundaries of single states, and did not have an untouchable fund.

The author also notes that Nubar's authority was a guarantee of the success of the project as he gave credit and weight to the organization. The news was welcomed by both the native Armenians of the Ottoman Empire and those who resided beyond its borders.

The author notes that the founding of the AGBU happened at the right time. It had a huge impact on the cultural, educational and economic improvement of Armenians worldwide.